



ԼՈՒՐԵՐ ԵՒ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԿԵԱՆՔԷՆ

ՆՈՐ ՍՐԲԱՎԱՅՐ ՄԸ ԵՒՍ ՅՈՐԴԱՆԱՆ
ԳԵՏԻ ԱՓԻՆ



Մինչ ծայրայեղականներ Միջին Արեւելքի տարածքին կը քանդեն եկեղեցիներ ու կը պղծեն քրիստոնէական սրբավայրեր, ներառեալ Տէր Զօրի Նահատակաց մատուռն ու յուշակոթողը, ասդին, Յորդանան գետի արեւելեան ափին, Յորդանանի Հաշիմական թագաւորութեան բարձր հովանաւորութեամբ, Հայաստանի Հանրապետութեան նախագահ Տիար Սերժ Սարգսեանի ու Հայաստանեայց Առաքելական Եկեղեցոյ նուիրապետական այթոռ Արք. Յակոբայ Միաբանութեան Պատրիարք Ամեն. Տ. Նուրհան Արք. Մանուկեանի ներկայութեամբ, ինչպէս նաեւ

մասնակցութեամբ Իսրայէլի մօտ Հայաստանի Հանրապետութեան Պատուաւոր Հիւպատոս Տիար Յուլակ Մումճեանի, 30 Հոկտեմբերին կը կատարուէր օծումը Ալ-Մադթասի տարածքին մէջ կառուցուած Սրբ. Կարապետ եկեղեցոյ:

Գեղատես ու զուարթնոցատիպ Սրբ. Կարապետի յղացքին հեղինակն է հայրենի վաստակաւոր ճարտարապետ և պետական մրցանակի դափնեկիր Արտակ Դուլեան: Եկեղեցոյ բարերարն է Տոքթ. Կարօ Կարապետեան (այժմ հանգուցեալ), որուն՝ Յորդանանի ափին եկեղեցի մը ունենալու տեսիլքն ու կտակը կ'իրականացնէր իր որդին՝ Տոքթ. Վիգէն Կարապետեան: Ի դէպ, բացման և օծման արարողութեան ներկայ էին նաեւ վերջինիս զաւակները և փեսան:

Ալ-Մադթասը քրիստոնէայ աշխարհին համար այն սրբավայրն է Յորդանան գետի ափին, ուր Յովհաննէս Մկրտիչ կը մկրտէր մեր Տիրոջ Որդին՝ Յիսուս Բրիստոսը:

Նախագահ Ս. Սարգսեանի պատուիրակութեան մաս կը կազմէին Հայաստանի Արտաքին գործոց նախարար Տիար Էտուարտ Նալպանտեան և Սփիւռքի Նախարար Տիկ. Հրանդ Յակոբեան:

Ամենապատիւ Պատրիարք Տ. Նուրհան Արք. Մանուկեանին կ'ընկերանար Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Դարիպեան, որոնք այս առթիւ օր մը առաջ մեկնած էին Յորդանանի Թագաւորութիւն: Հինգշաբթի, 30 Հոկտեմբերի յետմիջօրէին կատարուեցաւ Սրբ. Կարապետի Նկարներու Օծման արարողութիւնը՝ ի ներկայութեան Հայաստանի Հանրապետութեան նախագահի, նախարարներուն, Յորդանանի հոգեւոր և աշխարհիկ ղեկավարներու, քոյր



եկեղեցիներու հոգեւոր առաջնորդներու, Սրբոց Յակոբեանց Միաբանութեան ներկայացուցիչներու, Յորդանանի Առաջնորդ Վահան Արք. Թօփալեանի, Ամմանի Ազգային Տեղական Խորհուրդի և Առաջնորդարանի անդամ-անդամուհիներու և հոծ թուով յորդանանահայերու: Սրբոց Յակոբեանց Միաբանութենէն արարողութեան կը մասնակցէր նաեւ Միաբանութեան Թարգման Հ. Համբարձում Վրդ. Բէշիշեան:

Այս առթիւ Նախագահ Սարգսեան արձանագրութիւն ձգեց եկեղեցւոյ պատուոյ հիւրերու մատենանին մէջ, ուր ան կը յայտնէր իր շնորհակալութիւնը այն բանի համար որ Յորդանանը հոգ կը տանի այս համաշխարհային կարեւոր սրբատեղիին՝ հաստատելով իր յանձնառութիւնը քաղաքակրթութեանց միջեւ երկխօսութեան ամրապնդման անհրաժեշտութեան:

Տեղական Խորհուրդի կողմէ ողջոյնի խօսք արտասանեց Տիար Ներսէս Ներսէսեան. «...Մեր շնորհակալութիւնը կը յայտնենք Մեծաքանչ «Շինարար Իշխան» Էմիր Ղէզի Պին Մոհամմէտին, որ ծաղկեցուց ամբողջ Մաղթասի կրօնական և հաւատքի մթնոլորտը», ըսաւ ան, ապա յատուկ շնորհակալութիւն յայտնեց նաեւ երկրի իմաստուն թագաւորին, ըսելով.

- Մեր անչափ շնորհակալութիւնը կը յայտնենք երկիր Յորդանանի, Հաշիմական ընտանիքի Առաջնորդ, քաղաքագէտ, տնտե-

սագէտ, խաղաղութեան ճարտարապետ՝ Ապտալլա Երկրորդ Պին Հիսէյն Վեհապետին, «որ իր Հօր և Մեծ Հայրերու կողմէ ժառանգած և որդեգրած ազնիւ և մարդասիրական նկարագրին շնորհիւ կը վայելենք մեր կեանքը Յորդանանի մէջ»:

Յաջորդ օրը, դարձեալ Յորդանանի բարձրաստիճան պաշտօնեաներու ներկայութեան, որոնց մէջ նաեւ Իշխան Պին Ղէզիի ներկայացուցիչ Զբօսաշրջութեան նախարարութեան Էմին ԱԱՄ Պրն. Իսա Կամմօ և իր ազնուաւիայ Տիկինը, կատարուեցաւ Սրբ. Կարապետ եկեղեցւոյ աւագանի եւ Խորանի օծման հոգեպարար արարողութիւնը ձեռամբ Պատրիարք հօր և պատարագի մատուցմամբ Տ. Սեան Արք. Ղարիպեանի:

Հանդիսութեան ընթացքին կտակարար հայր Կարապետեանի որդին Տիար Վիգէն Կարապետեան իր հանգամանալից խօսքին մէջ ուրախութիւն յայտնեց որ ի վերջոյ կը կատարուէր իր հօր բաղձանքը և հայութիւնը կ'ունենար իր եկեղեցին Յորդանան գետի ափին՝ այլ եկեղեցիներու շարքին: Իրեն կ'ընկերանային նաեւ իր որդիները, փեսան, որոնք նոյնպէս մաս առին յայտագրին մէջ:

Այս հանդիսատր ու հպարտառիթ երկօրեայ արարողութեանց առթիւ Ամենապատիւ Պատրիարք Հայրը իր խօսքին մէջ գոհութիւն յայտնեց «Բարձրեալն Աստուծոյ, որ դարձեալ այսօր մեզ իրար մօտ կը բերէ, այս նորաօծ Սուրբ Կարապետ Մկրտարան-Մատրան մէջ»: Ապա Ան իր գնահատանքի խօսքին մէջ ընդգծեց Կարապետեան ընտանիքի նուիրուածութիւնը: Այնուհետեւ Պատրիարք Հայրը դիմելով ժողովուրդին ըսաւ. «...Եկեղեցին օրհնուելէ և օծուելէ ետք կը դադրի պարզ շէնք մը, քարերու և ծեփի կոյտ մը ըլլալէ և կը դառնայ հաւաքավայրը հաւատացեալներու...: Եկեղեցին դուք էք. եթէ դուք, սիրելի եղբայրներ և քոյրեր, ձեր սիրտերուն մէջ տակաւին վառ կը պահէք Աստուածորդոյն՝ Զրիստոսի հաւատքը, ուրեմն ձեզմէ իրաքանջիւրը կը դառնայ անկիւնաքար մը այս եկեղեցիին»: Իր խօսքի աւարտին Ամենապատիւ Նորիան Արքեպիսկոպոս Իր շնորհակալութեան ու երախտագի-

տուրքեան խօսքին մէջ ըսաւ.

- Յատուկ սրտի խօսք կ'ուղղենք Հաշիմական Թագաւորութեան արժանաւոր Գահակալ՝ Նորին Վեհափառութիւն Ապտալ-

լահ Բ. Թագաւորին: Ի բոլոր սրտէ կ'աղօթենք որ Հայր Աստուած անփորձ և անվտանգ պահէ Ձինք:

Մ.Գ.



Տոքթ. Վիգէն Կարապետեան



Նախ. Ս. Սարգսեան, Է. Նալպանտեան
Ամեն. Նորիւն Պատրիարք